



Ձ. ԿԻՐԱԿԻ ՊԵՆՏԵԿՈՍՏԷՆ ԵՍՊ



ԺԱՄԱՄՈՒՏ

Միածին Որդի եւ Աստուծոյ Բան, եւ անմահ՝ Եութեամբ, որ յանձն առիւր մարմնանալ սուրբ եւ միշտ կոյս Աստուածածինէն, անփոփոխելիդ՝ մարդ դառնալով խաչուեցար, Քրիստո՛ս Աստուած, եւ մահովդ՝ մահը խորտակեցիր. մին անձերէն՝ Ամենասուրբ Երրորդութեան, արժանի փառքի՝ Զօր եւ Զոգւոյն հետ փրկէ՛ մեզ:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԲԿ.

Օրհնութիւն բարձունքներու մէջ Կոյսէն ծնած մեր Թագաւորին. ալէլուի՛ա, ալէլուի՛ա:

Օրհնութիւն բարձունքներու մէջ մեր անսասանելի եւ հաստատուն Յոյսին. ալելուի՛ա, ալելուի՛ա:

Օրհնութիւն բարձունքներու մէջ անբաժանելի եւ միասնական Սուրբ Երրորդութեան. ալելուի՛ա, ալելուի՛ա:

ՄԵՍԵՂԻ (Սաղմոս 64, 2 - 3)

Աստուած իմ, Սիոնի վրայ կատարուած փառաբանութիւնը միայն քեզի կը պայելէ, եւ Երուսաղէմի մէջ քեզի աղօթքներ թո՛ղ բարձրանան:
Աղօթքներս լսէ՛ եւ ամէն մարմնաւոր էակ՝ քեզի թո՛ղ գայ, քեզի թո՛ղ դիմէ:

ԸՆԹԵՐՅՈՒԱԾ ԻՍՐԱՅԷԼ ՉԷ ՄԵՐԺՈՒԱԾ

**Ս. Պօղոս Առաքեալի Հռոմէացիներուն ուղղած թուղթէն է ընթերցուածը
(Հռ. 11, 13-24)**

Ձեզի կ'ըսեմ, հեթանոսներ, այն չափով, որ ես հեթանոսներու առաքեալն եմ, կը փառաւորեմ իմ պաշտօսն՝ իմ արենակիցներուս նախանձը շարժելու եւ անոնցմէ ոմանք փրկութեան հասցնելու համար: Արդարեւ, եթէ անոնց մեկուսացումը առիթ եղաւ աշխարհի հաշտութեան, անոնց ընտրութիւնը պիտի ըլլայ կենդանութիւն՝ մեռելներու մէջէն: Եթէ սկիզբը սուրբ է, ամբողջ զանգուածն ալ սուրբ է: Եթէ արմատները սուրբ են, պտուղներն ալ սուրբ պիտի ըլլան: Եթէ ճիւղերէն ոմանք ջախջախուեցան եւ դուն, վայրի ոստ ձիթենիի, պատուաստուեցար ճիւղերուն, որպէսզի հաղորդակցիս ձիթենիի արմատներուն պարարտութեան, մի՛ հպարտանար միւս ոստերուն դիմաց: Եթէ հպարտանաս՝ մտածէ, որ դուն չես արմատներ կրողը, այլ արմատներն են, որոնք քեզ կը կրեն: Թերեւս մտածես. ոստերը ջախջախուեցան, որպէսզի ես պատուաստուիմ: Անոնք ջախջախուեցան իրենց անհաւատարմութեան հետեւանքով, իսկ դուն պատուաստուեցար հաւատքով: Մի՛ հպարտանար ուրեմն, այլ՝ վախճիր: Որովհետեւ եթէ Աստուած չի նայեց հարազատ ոստերուն, թերեւս քեզի ալ չի նայէ:

Տե՛ս ուրեմն Աստուծոյ բարութիւնն ու խստութիւնը. խստութիւն՝ անոնց հանդէպ որ ինկան: Բարութիւն՝ քեզի հան-



դէպ, պայմանաւ որ դուն մնաս այդ բարութեան մէջ, ապա թէ ոչ՝ դուն ալ կը խորտակուիս:

Եթէ անոնք չյամառին նոյն անհաւատարմութեան մէջ, պիտի պատուաստուին: Աստուած ըստ բաւականին կարողութիւն ունի զանոնք վերստին պատուաստելու: Որովհետեւ եթէ դուն որ բնութեամբ կը պատկանիս վայրի ձիթենիին եւ հակառակ բնութեանդ՝ պատուաստուեցար ընտանի ձիթենիի վրայ, որչափ եւս աւելի անոնք վերստին պիտի պատուաստուին իրենց հարազատ ձիթենիին վրայ, որուն կը պատկանին բնութեամբ:

Ալէլուիա, Ալէլուիա,

Կանգնե՛՛ք Տէր իմ, Աստուած իմ, քու հրամաններուդ գործադրութիւնը պահանջե՛՛ք եւ բազմաթիւ ժողովուրդներ շուրջդ պիտի հաւաքուին:

(Սղմ. 7, 8)

Ալէլուիա:

ԱԲԵՏԱՐԱՆ ՀԱՅԵՐՈՒ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ

(Մատթ . 14, 13-21)

Տէրն մեր Յիսուս Զրիստոս, այս լուրին վրայ, նաւակով քաշուեցաւ մէկուսի անապատ տեղ մը: Ժողովուրդը իմանալով՝ զանազան քաղաքներէ, հետիոտն հետեւեցաւ իրեն: Նաւակէն իջնելով՝ տեսաւ հոծ բազմութիւնը, գուրջը շարժեցաւ եւ բուժեց անոնց հիւանդները: Իրիկունը, աշակերտները մօտեցան իրեն եւ ըսին. «Տեղը անապատ է եւ ժամը առաջացած. արձակէ՛՛ ժողովուրդը, որ երթայ



շրջակայ գիւղերէն ուտելիք գնէ»: Յիսուս ըսաւ անոնց. «Կարիք չունին երթալու, դուք կերակուր տուէք անոնց»: «Մենք հինգ հաց եւ երկու ձուկ ունինք», պատասխանեցին: «Ինծի՛՛ բերէք զանոնք», ըսաւ Յիսուս: Հրամայեց նախ ժողովուրդին, որ նստին խոտերու վրայ, յետոյ առաւ հինգ հացերը եւ երկու ձուկերը,

աչքերը երկինք բարձրացուց, օրհնեց զանոնք, կտրեց եւ տուաւ աշակերտներուն, որ բաժնեն ժողովուրդին: Բոլորը կերան ու կշտացան: Աւելցած կտորներով լեցուցին տասներկու սակառներ: Իսկ կերողները շուրջ հինգ հազար հոգի էին, առանց հաշուելու կիներն ու մանուկները:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ

Հացերու Բազմացումը

Հացերու բազմացման հրաշքը ցոյց կու տայ Աստուծոյ սէրն ու ողորմութիւնը մարդոց հանդէպ, յատկապէս անոնց որոնք կը սիրեն զինք եւ կ'ուզեն հանդիպիլ իր հետ: Յիսուս, թէեւ ուզեց մէկուսի քաշուիլ անապատ տեղ մը,

սակայն անդրադառնալով ժողովուրդին իրավիճակին, որոնք նման լքուած ոչխարներու կը հետեւէին իրեն ամէնուրեք, գուրջը կը շարժի, կը բուժէ հիւանդները, եւ կը կերակրէ բազմութիւնը: Մենք ալ երբ զգանք կարիքը ու-

րիշին օգնութեան հասնելու, երբ նշմարենք մեր շուրջիններուն պահանջքը սնունդի, ըլլայ հոգեւոր թէ ֆիզիքական, պարտական ենք մեր կեանքի առօրեայ անապատներէն դուրս գալու: Շատ անգամ ես ասի թիւնը, հպարտութիւնը եւ կամ տարբեր տեսակի հաճոյքներն ու զբաղումները կը խեղաթիրեն մեզ, եւ թոյլ չեն տար որպէսզի հանդիպինք թէ Աստուծոյ հետ, եւ թէ ուրիշին հետ, որ ստեղծուած ըլլալով Աստուծոյ պատկերին համաձայն կը դադրի «օտար» մը ըլլալէ, այլ կը դառնայ մեր մտերիմն ու բարեկամը:



«Մենք հինգ հաց եւ երկու ձուկ ունինք», մենք շատ բան չունինք տալու ուրիշին: Սակայն եթէ բարեացակամ ըլլանք ու բարեհաճ, ապահով որ Զրիստոս մեզմէ առնելով այդ քիչը, զայն պիտի վերադարձնէ բազմացած: Կարծեք առնելով մեզմէ մեր տկարութիւններն ու ապերախտութիւնները, զանոնք պիտի օրհնէ ու վերածէ

շնորհքներու: Ուստի չտրտմիք քիչին վրայ, այլ՝ յուսանք Աստուծոյ կարողութեան, վստահ ըլլալով որ Ան առատածերն է ու բազումողորմ:

Աւետարանի այս հատուածը կը հրաւիրէ մեզ հանդիպելու Աստուծոյ հետ սնանելու համար իր Խօսքէն, ինչպէս նաեւ հետեւելով Յիսուսի օրհնակին, մենք ալ, որպէս քրիստոնէայ հաւատացեալներ, քաջութիւնը ունենանք բարի գործեր կատարելու հանդէպ աղքատին, կարոտեալին, անտեսուածին, հիւանդին:



Հետեւեցէք

Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան

ԼՈՅՍ ԶՈՒԱՐԹ

պատկերասփիւռի յայտագրին

Ամէն Երկուշաբթի, Երեկոյեան ժամը 7:15-ին
Կրկնօրինը
Ուրբաթ կ.ե. 1:00 - 2:30
Շաբաթ առաւօտեան 5:00 - 6:30



Նուր ալ Շարք
Կայանն Ը

NileSat
11096 H

www.noursat.tv

Tel.: 01/ 570 559 - Fax: 01/ 570 558 e-mail: eparchy@armeniancatholic.org
www.armeniancatholic.org